ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-7/9» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ (ԳՀ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան

19.04.2019թ.
ժամը 11[00]

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության պետ Հ. Մելիքյան,
Գնահատողներ՝
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության Պ, Դ և ԲԱ ապահովման բաժնի առաջատար մասնագետ Ս. Պետրոսյան,
ՀՀ ԶՈՒ ԹՎ պարենային ծառայության զորային սննդի կազմակերպման և պահեստների ու տեխնիկական միջոցների բաժնի պետ, գնդապետ Ռ. Հովհաննիսյան,
Բացակայում է՝
ՀՀ ԶՈՒ ԹՎ պարենային ծառայության պետ, գնդապետ Ա. Մարգարյան,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի առաջատար մասնագետ Գ.Գևորգյան:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-7/9» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Գ. Գևորգյան)

1. «Դամբայ» ՍՊԸ-ի կողմից 19.04.2019թ. ներկայացրած թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/12 բողոքը քննարկելու վերաբերյալ.
2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-7/9» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքների ամփոփման մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. «Դամբայ» ՍՊԸ-ի կողմից 19.04.2019թ. ներկայացրած թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/12 բողոքը քննարկելու վերաբերյալ.

(Գ. Գևորգյան)

1.1 19.04.2019թ. «Դամբայ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացվել է թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/12 բողոքը՝ համաձայն որի մասնակիցը խնդրել է պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին էլեկտրոնային փոստի միջոցով անհապաղ ծանուցել 3-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից «Դամբայ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով վերջինիս ներկայացնել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-7/9» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը: ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի առ 20.05.2019թ. թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/12 որոշման համաձայն «Դամբայ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը մերժվել է:

2. «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-7/9» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքների ամփոփման մասին.

(Գ. Գևորգյան)

2.1 Քանի որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի կողմից ԵԴ/28163/02/18 քաղաքացիական գործի շրջանակներում 25.02.2019թ. կայացված վճռով անվավեր է ճանաչվել ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար պարենային սարքավորումների վերանորոգման ձեռքբերման նպատակով 2017 թվականին հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կայացրած որոշման՝ «Բագրևանդի Ղողանջ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) հայտը մերժելու մասը, ինչի արդյունքում շարունակվել է նշված ընթացակարգը և սահմանվել անգործության ժամկետ, իսկ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-7/9» ծածկագրով գնանշման հարցման և վերոհիշյալ բաց մրցույթի գնման առարկաները նույնն են, ուստի պատվիրատուի ղեկավարի առ 03.06.2019թ. թիվ 438/ԴՎԱ հրամանով «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-7/9» ծածկագրով գնման ընթացակարգը կասեցվել է մինչև «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով բաց մրցույթը չկայացած հայտարարվելը կամ այդ բաց մրցույթի արդյունքում պայմանագրի կնքման դեպքում ՀՀ կառավարության որոշմամբ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-7/9» ծածկագրով գնանշման հարցումը չկայացած հայտարարվելը:

Հաշվի առնելով, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-7/2» և «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-7/9» ծածկագրերով գնման ընթացակարգերի գնման առարկաները նույնն են և «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԾՁԲ-7/2» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում պայմանագրի կնքման արդյունքում վերացել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-7/9» ծածկագրով ընթացակարգը շարունակելու անհրաժեշտությունը, ուստի 11.07.2019թ. պատվիրատուի ղեկավարը թիվ ՊՆ/02/1189-2019 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարություն՝ խնդրի կարգավորման վերաբերյալ լուծում առաջարկելու խնդրանքով:

Քանի որ ՀՀ ֆինանսների նախարարության առ 02.08.2019թ. թիվ 01.1/26/12/80-20/9 գրության համաձայն տվյալ դեպքում խնդիրը կարգավորվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԾՁԲ-7/9» ծածկագրով ԳՀ ընթացակարգը 3-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող Հ. Մելիքյան

Գնահատող Ս. Պետրոսյան

Գնահատող Ռ. Հովհաննիսյան

Գնումները համակարգող Գ. Գևորգյան